ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Գ-25

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 01 20.19թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մաբտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վարդան Դերիկյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 68693900 (վաթսունութ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 68693900 վաթսունութ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ք. Երևան, Բաղրամյան 24	ք. Երևան, Գ. Լուսավորչի 15
Հ/հ 900011024115	ՀՀ Կենտրոնական գանձապետարան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/հ 900018005364
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 02505623
Նախագահ՝ ________ (ստորագրություն)	Տնօրեն՝ ________ (ստորագրություն)
Ռ. Մարտիրոսյան	Վ. Դևրիկյան
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ ________ (ստորագրություն) (________ (անուն ազգանուն)

Հավելված 1
«30» 01 2019թ.
N 15-25 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն Վարդան Դևրիկյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «30» 01 2019թ. N 15-25 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 68693900 (վաթսունութ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Վարդան Դևրիկյան

Հավելված 2
«30» 01 20.19թ.
N 4-25 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ինստիտուտի մեծ և փոքր բազային ծրագրերով իրականացվող աշխատանքների նպատակն է հայ գրականության պատմության համալիր ուսումնասիրությունը գրականության պատմության պարբերացմամբ, ժանրային համակարգով և գրական ուղղություններով, ինչպես նաև հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակությունները ճշգրտված բնագրերով և գիտական ծանոթագրություններով ներկայացնելը:

1. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

.Կատարվող աշխատանքները պետք է համապատասխանեն գրականագիտության արդի չափանիշներին, հիմնված լինեն աղբյուրագիտական, գրական սկզբնաղբյուրների, ինչպես նաև տեսական դրույթների վրա, պարունակեն գիտական նոր տվյալներ:

Հայ գրականությունը պետք է դիտարկվի ոչ միայն պատմական զարգացման մեջ, այլև հարևան ժողովուրդների և ընդհանրապես համաշխարհային գրականության համատեքստում:

Հատուկ պետք է ընդգծվի հայ գրականության դերը թե՛ վաղ շրջանի արևելաքրիստոնեական ու արևելյան և թե՛ եվրոպական գրականության համատեքստում:

Պարտադիր պայման է քննարկվող հարցերի վերաբերյալ հայ և օտար ժամանակակից հեղինակների տեսակետների վկայակոչումը:

Հայ դասականների երկերի հրատարակության ծրագրի շրջանակում Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի համալրված վերահրատարակման, Ավետիք Իսահակյանի և Նիկող Աղբալյանի երկերի հրատարակությունների ժամանակ տպագրվող գործերը պետք է մանրակրկիտ համեմատվեն բնագրերի հետ, ինչպես որ արվել է մինչև այժմ: Պետք է ներկայացվեն այդ երկերի ստեղծագործական պատմությունները, նրանց գործերում հիշատակվող հատուկ անունների բացատրությունները տրվեն, ինչպես նաև նշվեն սուրբգրային տեղիները:

Արևելյան Եվրոպայի հայկական ժողովրդական ստեղծագործությունների բնագրերի հրատարակության ժամանակ դրանք պետք է համեմատվեն թե՛ բուն հայկական միջավայրի և թե՛

տվյալ երկրների համաբնույթ ստեղծագործությունների հետ և ցույց տրվեն առկա ընդհանրությունները, տարբերությունները և ազդեցությունները:

2. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Գրական ավանդների փոխանցականության տեսանկյունից ուսումնասիրվում է այն հարցը, թե հայկական սիմվոլիզմի պատկերային համակարգում ինչ տեղ են գրավում միջնադարյան քրիստոնեական այլաբանական պատկերները, որ միջնադարյան կրոնա-եկեղեցական մի շարք պատկերներ նոր մեկնաբանություն և իմաստ են ստացել սիմվոլիստական գրականության մեջ:

Արդի գրականության հետազոտման շրջանակում վերլուծվում է անկախության շրջանի գրականությունը՝ ժամանակակից գրական ուղղությունների հաշվառման և իրականության արտացոլմամբ:

Քննվում է այն հարցը, թե որն է արևմտահայ գրականությունից ու արևմտահայ գրողներից դեպ սփյուռքահայ գրականություն և սփյուռքահայ գրողներ անցման շրջանը:
Նույնը վերաբերում է 1990-ական թվականներից արտերկրում հաստատված գրողների սփյուռքահայ գրականությանը մաս կազմելու հարցին, այդ թվում և արևելահայերեն ու արևմտահայերեն, ավանդական և նոր ուղղագրությամբ ստեղծագործելու խնդիրներին:

Ուսումնասիրվում է բանահյուսական փոքր ժանրերի անդրադարձը սփյուռքահայ գրողների ստեղծագործություններում: Ժողովրդական աղոթքի, օրհնության և այլ նմանաբնույթ ժանրերի տեղ գտնելը տարբեր ստեղծագործությունների ընդհանուր շարադրանքում, թե՛ որպես հոգևորի դրսևորում և թե՛ գրական ոճավորմամբ հնօրյա բանաձևերի լեզվական նոր կիրառություններ:

Նույն մոտեցմամբ ներկայացվում է արևմտահայ բնաշխարհի հետ կապված տարբեր սովորույթների վերհուշը սփյուռքահայ այսօրվա հեղինակների գործերում, որոնց մասին նրանք լսել են վերապրողներից կամ նրանց անմիջական ժառանգներից:

ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հինգերորդ դարի հայ պատմագրության տարբեր լեզուներով թարգմանությունը կարևորվում է թե՛ այդ հեղինակների և Հայոց պատմության հանրահռչակման և թե՛ այդ

ստեղծագործությունների ունեցած գեղարվեստական արժանիքները ներկայացնելու տեսանկյունից:

Նման մոտեցմամբ պատմիչ առ պատմիչ պատմագրական ամեն երկի գրաբար բնագիրը համեմատվում է աշխարհաբար, ռուսերեն և անգլերեն թարգմանությունների հետ: Նշվելու են թարգմանությունների մեջ առկա տարբերությունները:

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Թումանյանի մասին օտարազգի հեղինակների գրածները թեմատիկ-տեսական առումով կներկայացվեն երկու խմբի բաժանված.

Ա. Գրականագիտական. տարբեր գրականագետների կողմից Թումանյանի ստեղծագործությունների, ինչպես նաև հայ գրականությանը նվիրված աշխատանքների շրջանակում Թումանյանի գործերի վերլուծություններ, որոնք կարևորվում են Թումանյանի ստեղծագործությունը և հայ գրականությունը համաշխարհային գրականության պատմության ընդհանուր շրջանակում դիտարկելու առումով:

Բ. Թումանյանի մասին հայտնված մտքերը և ասույթներ, որոնք վերաբերում են ոչ թե նրա ստեղծագործությունների վերլուծությանը, այլ հայտնվել են գրողի կյանքի տարբեր իրադարձությունների, հոբելյանների, ինչպես նաև հայ մշակույթին և Հայաստանին վերաբերող գնահատականների շրջանակում:

Նման բնորոշումներում վեր են հանվում մեծ գրողի ազգային և համամարդկային բնույթը, նրա երկերի խորը փիլիսոփայական և հումանիստական բնույթը, ժողովուրդների խաղաղ համակեցության և բարեկամության երգիչ լինելը:

Աշխատանքը առանձնակիորեն է կարևորվում Թումանյանի ծննդյան 150-ամյակի շրջանակում՝ ցույց տալով բանաստեղծի գնահատումը միջազգային առումով: Այն կնպաստի Թումանյանի առավել հանրահռչակմանը՝ ներկայացնելով բանաստեղծի մասին ժամանակի մեծերի հայտնած կարծիքները:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

2019թ. հրատարակության կպատրաստվի «5-18-րդ դարերի հայկական սկզբնաղբյուրները եվրոպական երկրների մասին» գրքի երկրորդ՝ «5-18-րդ դարերի հայկական աղբյուրները Իտալիայի մասին» հատորը:

2019թ. հրատարակության կպատրաստվի նաև «Եվրոպական ուղեգրողները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարը.

Աշխատանքն իրականացվում է երկու ուղղությամբ.

Առաջին՝ եվրոպական տարբեր ուղեգրողների Ուղեգրությունների՝ Հայաստանին վերաբերող հատվածների վերլուծություններ.

Երկրորդ՝ Հայաստանի որևէ շրջանի կամ նշանավոր կենտրոնի մասին եվրոպական ուղեգրողների գրածները:

2019թ. լույս կտեսնի Գ. Կարագյոզյանի՝ Նախիջևանին նվիրված ուսումնասիրությունը:

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Իրականացվում է Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության տարեգրության կազմումը և հրատարակումը չորս հատորով: Արդեն լույս են տեսել առաջին երկու հատորները:

2019 թ. լույս կտեսնի տարեգրության երրորդ հատորը, որն ընդգրկելու է բանաստեղծի կյանքի և գործունեության 1915-1919թթ:

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2019թ. կտպագրվեն

ա) Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի երրորդ և չորրորդ հատորների համալրված վերահրատարակությունը:

բ) Ավետիք Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի տասներորդ հատորը՝ ուր տեղ կգտնեն Վարպետի հուշերը և գրականագիտական հոդվածները:

գ) Նիկոլ Աղբալյանի երկերի երրորդ հատորը լեզվաբանական աշխատանքներին նվիրված:

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝ _____ _____
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար _____ _____
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 3
«30» 01 2019թ.
N 4-25 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածուի 3-րդ հատորի վերախմբագրված վերահրատարակություն	Թումանյանի պոեմները	Ճշգրտված բնագրեր նոր ծանոթագրություններով	Առավել ամբողջական և ճշգրտված բնագրերով և յուրաքանչյուր ստեղծագործության պատմությամբ կներկայացվեն Թումանյանի Մեծ կտավի չափածո ստեղծագործությունները	2019թ. փետրվար	2.000.000 (երկու միլիոն) դրամ (գումարը հայթայթվելու է այլ աղբյուրից)
2	Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածուի 4-րդ հատորի վերախմբագրված վերահրատարակություն	Թումանյանի պոեմները	Ճշգրտված բնագրեր նոր ծանոթագրություններով	Առավել ամբողջական և ճշգրտված բնագրերով և յուրաքանչյուր ստեղծագործության պատմությամբ կներկայացվեն Թումանյանի մի շարք պոեմները	2019թ. սեպտեմբեր	2.200.000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) դրամ (գումարը հայթայթվելու է այլ աղբյուրից)
3	Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածուի 5-րդ հատորի վերախմբագրված վերահրատարակություն	Թումանյանի արձակ ստեղծագործությունները	Ճշգրտված բնագրեր նոր ծանոթագրություններով	Առավել ամբողջական և ճշգրտված բնագրերով և յուրաքանչյուր ստեղծագործության պատմությամբ կներկայացվեն Թումանյանի հեքիաթները և պատմվածքները	2019թ. նոյեմբեր	2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (գումարը հայթայթվելու է այլ աղբյուրից)
4	Ավետիք	Իսահակյանի	Կազմվում է նոր	Պատկերացում է	2019 թ.	1 . 400.000 (մեկ

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

	Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 9-րդ	հուշերը և գրականագիտական հոդվածները	բնագիր, վերականգնվում են գաղափարական նկատառումներով դուրս մնացած հատվածները, ծանոթագրություններում տեղեկություններ են հաղորդվում հիշված դեպքերի և անձնավորությունների մասին	տալիս Իսահակյանի գրականագիտական ըմբռնումների մասին: Ծանոթագրությունները օգնում են հասկանալու 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի մի շարք հասարակական քաղաքական իրադարձություններին Իսահակյանի մասնակցությունը	մարտ	միլիոն չորս հարյուր հազար) դրամ (ձեռք է բերվելու տարբեր աղբյուրներից)
5	Նիկոլ Աղբալյան Երկերի ժողովածու, հտ. 3-րդ	Ն. Աղբալյանի Հայոց լեզվի պատմությանը նվիրված հոդվածները և ուսումնասիրությունները	Ճշտվել է բնագիրը, հայ հին գրականությունից կատարված մեջբերումները, ինչպես նաև ծանոթագրվել են այն հատվածները, որոնցում հայտնված կարծիքները չեն համապատասխանում այսօրվա լեզվաբանական ըմբռնումներին:	Կարևորվում է հայոց լեզվի պատմության հարցի ուսումնասիրման պատմության առումով	2019թ. սեպտեմբեր	1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ (գումարը հայթայթվելու է այլ աղբյուրից)
6	V-XVII դարերի հայկական աղբյուրները Իտալիայի մասին	«V-XVII դարերի եվրոպական աղբյուրները Հայաստանի մասին» մատենաշարի առաջին հատորն է, ուր ներկայացվում են հայ մատենագրության մեջ մինչև 17-րդ դարի վերջը եղած մատենագրական վկայությունները:	Ձեռագիր և տպագիր աղբյուրներից դուրս են հանվում հայ հեղինակների գործերի Իտալիային վերաբերող հատվածները և համապատասխան ծանոթագրություններով ու տեղեկություններով, ինչպես նաև համառոտ անգլերեն վերաշարադրմամբ ներկայացվում:	Կնպաստի հայ-իտալական գրական կապերի և պատմական փոխհարաբերությունների ուսումնասիրմանը, Եվրոպայի կերպարի հայկական ընկալմանը:	2019 թ. դեկտեմբեր	1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (հատկացնելու է Գ. Գյուլբեկյան հիմնադրամը)
7	Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ (ռուսերեն),	Առաջին անգամ ներկայացվում են հայկական հարցի և հայ	Իսահակյանի տպագիր և ձեռագիր գործերից հավաքվել են տարբեր	Կարևորվում է հայկական հարցի և հայ ժողովրդի պատմության	2019թ. սեպտեմբեր	870.000 (ութ հարյուր յոթանասուն հազար) դրամ

		ժողովրդի մասին Իսահակյանի աֆորիստիկ մտքերը	թեմաների վերաբերյալ Վարպետի խտացած մտածումները	ուսումնասիրման տեսանկյունից		(հատկացնելու է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը)
8	Սուսաննա Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյանի կյանքը և ստեղծագործությունը (ռուսերեն)		Ներկայացվում է Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության գիտական կենսագրությունը	Ռուսալեզու ընթերցողին առաջին անգամ համապարփակ ձևով կներկայացվի բանաստեղծի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	2019թ. սեպտեմբեր	940.000 (ինը հարյուր քառասուն հազար) դրամ (հատկացնելու է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը)
9	Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915-1919)	Թումանյանի կյանքի և ստեղծագործության 1915-1919թթ. շրջանն ընդգրկող գիտական տարեգրությունը	Ըստ արխիվային վավերագրերի և Թումանյանի նամակների ու հարակից այլ նյութերի կազմվում է բանաստեղծի կյանքի ժամանակագրությունը	Ներկայացնում է բանաստեղծի կյանքի տարեգրության տվյալ ժամանակահատվածը և օգնում ավելի ամբողջական հասկանալու Թումանյանի երկերի ստեղծագործական պատմությունը	2019թ. հունիս	2.300.000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) դրամ (գումարը հայթայթվելու է այլ աղբյուրից)
Ընդամենը						

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավարը _____ (ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 4
«30» 01 2018թ.
N 2-25 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	55214.6	*11042.9*	*13803.7*	*13803.7*	*16564.3*
2	տնտեսական և այլ ծախսեր*	2030.4	*406.1*	*507.6*	*507.6*	*609.1*
Ընդամենը (առանց ԱԱՀ)		*57245.0*	*11449.0*	*14311.3*	*14311.3*	*17173.4*
ԱԱՀ		*11448.9*	*2289.8*	*2862.2*	*2862.2*	*3434.7*
ԸՆԴԱՄԵՆԸ		68693.9	13738.8	17173.5	17173.5	20608.1

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Յուրիկ Պետրոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Անուշ Արզումանյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հ.Ս.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 4.1
«30» 01 2018 թ.
N Ա-25 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ [*]

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	1670.4
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*677.4*
	գազի ծառայություն	
	ջրամատակարարման ծառայություն	*448.0*
	կապի ծառայություն	*545.0*
	աղբահանություն	
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	
	....	360.0
Ընդամենը		**2030.4**

Կազմակերպության տնօրեն՝ ________________ (________________)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ ________________ (________________)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

[*] *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված 5
«30» 01 2018թ.
N 4-25 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Դերիկյան Վարդան Գևորգի	Տնօրեն	բ.գ.դոկտոր	117000
2	Աբեղյան Հասմիկ Սուրենի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
3	Աբրահամյան Սուրեն Սերյոժայի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու, դոցենտ	72752
4	Ալեքսանյան Սլավիկ Գարսևանի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
5	Ալեքսանյան Ամալյա Խաչիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
6	Աղաբաբյան Գայանե Սուրենի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
7	Ավանեսյան Արմեն Ավանեսի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	77904
8	Ավետիսյան Զավեն Վասիլի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	74100
9	Ավետիսյան Լուսինե Արարատի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	79400
10	Ավետիսյան Սաթենիկ Հարությունի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	80000
11	Արամյան Ալվինա Գուրգենի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
12	Արիստակեսյան Ռուզաննա Բուլիկի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	72752
13	Բալայան Նաիրա Մելսիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	79400
14	Բարսեղյան Բելլա Ղևոնդի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	74100
15	Բեջանյան Քրիստինե Հենրիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	77904
16	Գաբրիելյան Աշոտ Հրանտի	Լաբորանտ		40000
17	Գալոյան Էմմա Ժորայի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	77904
18	Գասպարյան Գուրգեն Էդվարդի	Գիտաշխատող		36800
19	Գասպարյան Լուիզա Արեգի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու	79400

* *Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը*

20	Գևորգյան Հռիփսիմե Գառնիկի	Դահակ		75200
21	Դեմիրճյան Պետրոս Հակոբի	Ավագ գիտաշխատող	բ.գ.դոկտոր	72752
22	Էդոյան Հենրիկ Անտոնի	Բաժնի վարիչ	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	72752
23	Թորոսյան Հայկուշ Ռաֆիկի	Գրադարանավար		75200
24	Իսահակյան Ավետիք Վիգենի	Տնօրենի խորհրդական, բաժնի վարիչ	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	80000
25	Խաչատրյան Մարգարիտա Մամիկոնի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	74100
26	Խաչատրյան Շողիկ Բորիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
27	Խաչատրյան Թաղևոս Արշավիրի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
28	Կարագյոզյան Գոհար Լևոնի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
29	Կիրակոսյան Վլադիմիր Աղասու	Խմբի ղեկավար	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	77000
30	Հակոբյան Անահիտ Պիոնի	Գիտաշխատող	բ.գ.թեկնածու	74100
31	Համբարձումյան Նաիրա Վալերիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	79400
32	Հայրյան Զարուհի Գևորգի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	75752
33	Հարությունյան Լաուրա Ժորայի	Ավագ լաբորանտ		104000
34	Հարությունյան Վարդուհի Ջանիբեկի	Հավաքարար		75200
35	Հովհաննիսյան Սուսաննա Գուրգենի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր, դոցենտ	74100
36	Հովհաննիսյան Քրիստինե Բանդիկի	Գիտաշխատող		80300
37	Ղազարյան Անի Վաչիկի	Կրտսեր գտտաշխատող-հմկ. օպերատոր	բ.գ.թեկնածու	79400
38	Ղազարյան Վաչիկ Վանուշի	Տնտեսվար		109000
39	Մանուկյան Արմեն Լևոնի	Թեմ. խմբի ղեկավար	բ.գ.թեկնածու	87752
40	Մարգարյան Սիրուշ Ալեքսանդրի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	96000
41	Մելքումյան Քրիստինե Խորենի	Գործերի կառավ. և գործավար, կրտսեր գիտաշխատող		80000
42	Մկրտչյան Նունե Լենսերի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	72752
43	Մուշեղյան Ալբերտ Վարազդատի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	73000
44	Մնացականյան Եվա Ժորայի	Ավագ	բ.գ.թեկնածու	74100

		գիտաշխատող		
45	Նավասարդյան Վահան Սուրենի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	72752
46	Նիկողոսյան Արքմենիկ Հրայրի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	79400
47	Որսկանյան Հերիքնազ Վանիկի	Փոխտնօրեն, գիտքարտուղար	բ.գ.թեկնածու	72752
48	Սարգսյան Մարինե Հրանտի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	72752
49	Սարգսյան Նառա Ղարիբի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	40000
50	Սարիբեկյան Հրաչյա Հարությունի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու	79400
51	Մարինյան Մանե Սերգեյի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	72752
52	Սեյրանյան Լիլիթ Բորիսի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	72752
53	Սոլակյան Սիլվա Վարդգեսի	Լաբորանտ		75200
54	Սոլակյան Սոնա Վարդգեսի	Գլխ. հաշվապահ		135000
55	Ստեփանյան Սերգեյ Լևոնի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	77904
56	Վարդանյան Անիկ Մկրտչի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	79000
57	Վարդանյան Լուսինե Մկրտչի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	79400
58	Վարժապետյան Իրիտա Դանիելի	Գիտաշխատող		75200
59	Վիրաբյան Լաու րա Կարապետի	Գիտաշխատող		36800
Ընդամենը				**4515140**

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (ստորագրություն) (անուն ազգանուն)

L.S.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«23» 01 20..19թ.

ՀՀ ԳԱԱ, ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, ի դեմս տնօրեն Վարդան Դևրիկյանի, հանդիսանալով «29» հունվար 2018 թ. կնքված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N Ե-26 պայմանագրի Կողմեր, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերն ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԳԱԱ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը *(կազմակերպության անվանումը)* Տնօրեն _____ *(ստորագրություն)* Վարդան Դևրիկյան *(անուն, ազգանուն)*	Նախագահ _____ *(ստորագրություն)* ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ա.Տ.

Ա.Տ.